Կ-378-15.11.2019,03.12.2019-ՊԻ-011

Նախագիծ
Լրամշակված տարբերակ
Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Սահմանադրական դատարանի մասին» 2018 թվականի հունվարի 17-ի ՀՕ-42-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 88-րդ հոդվածում լրացնել նոր՝ 4.1-ին, 4.2-րդ և 4.3-րդ մասեր.

«4.1. Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամները, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են պաշտոնավարել, սույն մասի ուժի մեջ մտնելու պահից սկսած՝ երկամսյա ժամկետում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական ներկայացնելու դեպքում, հրաժարականի ընդունված համարվելու արդյունքում լիազորությունները դադարելուց հետո մինչև Սահմանադրությամբ սահմանված պաշտոնավարման տարիքը լրանալը ստանում են կենսաթոշակ՝ հրաժարական ներկայացնելու օրվա դրությամբ հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի

տարբերության չափով, եթե պահպանվել է սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությամբ նախատեսված պահանջը:

4.2. Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամները, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են պաշտոնավարել, միաժամանակ սույն հոդվածի 4-րդ և 4.1-ին մասերով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու դեպքում հրաժարական ներկայացնելու դիմումում նշում են, թե որ մասով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունքից են օգտվում: Այդ նշումը չկատարվելու դեպքում՝ օգտվում են սույն հոդվածի 4.1-ին մասով նախատեսված իրավունքից:

4.3. Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամները, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են պաշտոնավարել, սույն հոդվածի 4.1.-ին մասով սահմանված հիմքով նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում (հաշվարկվում) է՝ Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման տարիքը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից՝ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով սահմանված չափով՝ առանց կենսաթոշակի իրավունքը վերանայելու, եթե պահպանվել է սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությամբ նախատեսված պահանջը:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված՝ Օրենքի 88-րդ հոդվածում լրացվող 4.1-րդ մասի իրավակարգավորումը Սահմանադրական դատարանի դատավորի կողմից սահմանված ժամկետում հրաժարական ներկայացնելու մասով գործում է սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

3. Եթե Օրենքի 88-րդ հոդվածի 4.1.-ին մասով նախատեսված ժամկետում վաղ կենսաթոշակի անցնելու նպատակով հրաժարական է ներկայացրել Սահմանադրական դատարանի ավելի, քան երեք դատավոր, ապա Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար ընտրությունն անցկացվում է Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար թեկնածուների առաջադրումներ կատարելու՝ Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրյա ժամկետում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

2015 թվականի սահմանադրական փոփոխությունները նշանավորեցին նոր Սահմանադրական դատարան ունենալու՝ սահմանադրի տեսլականը: Մասնավորապես, սահմանադրությունը նախատեսում է Սահմանադրական դատարանի կազմավորման լիովին նոր կարգ, այն է՝ Սահմանադրական դատարանի ինը դատավորներին պետք է ընտրի Ազգային Ժողովը՝ երեքին Հանրապետության նախագահի, երեքին՝ Կառավարության, երեքին՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Սակայն, սահմանադրության ընդունման պահին Սահմանադրական դատարանն արդեն հիմնականում կազմավորված էր: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ սահմանադրությամբ նախատեսված Սահմանադրական դատարանի կազմավորման մոդելը դեռևս լիարժեքորեն կյանքի չի կոչվել: Իսկ հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական փոփոխություններ տեղի են ունենում մոտավորապես տասը տարին մեկ, իսկ 2018 թվականին տեղի ունեցած ժողովրդական, ոչ բռնի հեղափոխությամբ պայմանավորված՝ առաջիկայում հնարավոր են նոր

սահմանադրական բարեփոխումներ, ամենայն հավանականությամբ սահմանադրությամբ նախատեսված սահմանադրական դատարանի կազմավորման նոր մոդելը կյանքի չի կոչվի: Ասվածը հաշվի առնելով Նախագծով առաջարկվում է Սահմանադրական դատարանի դատավորների համար վաղ կենսաթոշակի անցնելու նոր ժամանակավոր մոդել:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ դատավորների վաղ կենսաթոշակի անցնելու կառուցակարգերը բաժանվում են երկու խմբի՝ կամավոր և հարկադրական: Տարբեր երկրներում գործում են նշված կառուցակարգերի տարբեր ձևաչափեր. հարկադրական կառուցակարգերը որպես կանոն կապված են դատական համակարգի փոփոխությունների (օրինակ՝ Հունգարիա, Լեհաստան) կամ այնպիսի հիվանդություն ձեռք բերելու հետ, որի հետևանքով այլևս ի վիճակի չէ կատարելու իր լիազորությունները, կամավորները՝ կենսաթոշակային համակարգի փոփոխության հետ (օրինակ՝ Իռլանդիայում 2012 թվականին կատարված փոփոխությունը, որը թույլ էր տալիս 65 տարին լրացած դատավորներին վաղ կենսաթոշակի անցնել), դատավորների բարեվարքության գնահատման կառուցակարգի ներդրման հետ (օրինակ՝ Ուկրաինայում 2014 թվականից գործող կարգավորումը) և այլն: Հարկ է նկատել, որ արտասահմանյան մի շարք երկրների փորձը վկայում է, որ վաղ կենսաթոշակի անցնելու հնարավորություն տրվում է ոչ միայն դատավորներին, այլև տարբեր հանրային ծառայողների՝ կապված պետության սոցիալական, կենսաթոշակային քաղաքականության փոփոխության, նոր կադրեր ներգրավելու անհրաժեշտության հետ (օրինակ՝ Իռլանդիայում 2009 թվականին գործած կարգավորման համաձայն հանրային ծառայողները կարող էին վաղ կենսաթոշակի անցնել սկսած 50 տարեկանից, ԱՄՆ-ում սոցիալական ապահովության բնագավառի աշխատողներին և այլ դաշնային ծառայողների վաղ

կենսաթոշակի հնարավորություն է 50 տարին լրացած լինելու և համապատասխան ոլորտում 20 տարվա փորձի պարագայում[1]):

Դատավորի վաղ կենսաթոշակի անցնելու կամավոր կառուցակարգեր Հայաստանում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «4. *Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամի և սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնն առնվազն տասներկու տարի զբաղեցրած անձին նրա լիազորությունները հրաժարականի դիմում տալու միջոցով դադարելու դեպքում, անկախ նրա՝ օրենքով նախատեսված կենսաթոշակային տարիքը լրացած լինելու հանգամանքից, եթե պահպանվել են սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջները, և 12-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերով, Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման առավելագույն տարիքը լրանալու, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու դեպքում «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով նշանակվում է կենսաթոշակ:*»: Իսկ նույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերելի կարգավորումը նախատեսում է, որ Սահմանադրական դատարանի դատավորի կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող դադարեցվել այլ աշխատանք կատարելու դեպքում, բացառությամբ հանրային ծառայության անցնելու դեպքերի: Այլ կերպ ասած, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ

[1] https://www.opm.gov/policy-data-oversight/workforce-restructuring/voluntary-early-retirement-authority/

կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող կարգավորման տարբերությունը արդեն գոյություն ունեցող կարգավորումից հիմնականում այն է, որ նախագիծը չի նախատեսում Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածի վերաբերյալ պահանջ, ինչն էլ պայմանավորված է նախագծերի փաթեթի հիմնավորման մեջ ներկայացված՝ ստեղծված սահմանադրահիրավական խնդիրը լուծելու անհրաժեշտությամբ:

Վրաստանում դատական համակարգի փոփոխությունների համատեքստում կարգավորում է նախատեսվել, որը հնարավորություն է տվել 2005 թվականի հունվարի 1-ից 2006 թվականի հունվարի 1-ը Գերագույն դատարանի դատավորներին՝ այդ պաշտոնում 3 տարի աշխատելու և Սահմանադրական դատարանի դատավորներին՝ այդ պաշտոնում 5 տարի աշխատելու դեպքում հրաժարական ներկայացնելիս ցմահ ստանալ իրենց հրաժարականի պահին ունեցած աշխատավարձի չափով դրամական ապահովում՝ անկախ տարիքից:

Ռուսաստանի Դաշնության «Ռուսաստանի Դաշնությունում դատավորների կարգավիճակի մասին» օրենքի [2] 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն յուրաքանչյուր դատավոր անկախ տարիքից հրաժարականի իրավունք ունի: Հրաժարական այդ օրենքի իմաստով համարվում է պաշտոնից պատվավոր հեռանալը կամ հեռացնելը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն հրաժարականի մեջ գտնվող դատավորին վճարվում է կենսաթոշակ ընդհանուր հիմունքներով, իսկ դատավորի 20 տարվա ստաժ ունեցող անձին՝ իր ընտրությամբ կենսաթոշակ ընդհանուր հիմունքներով կամ ցմահ ամենամսյա չհարկվող դրամական ապահովում: Աշխատանքային ստաժից և տարիքից կախված՝ դրամական ապահովման չափը փոխվում է: Այս կարգավիճակը կարող է չեղարկվել, եթե հրաժարականի մեջ գտնվող դատավորը իր աշխատանքի ընթացքում թույլ է տվել

[2] Օրենքը հասանելի է հետևյալ հղումով՝ http://docs.cntd.ru/document/9004453

կարգապահական խախտումներ, խախտում է օրենքով սահմանված արգելքները և սահմանափակումները, նրա նկատմամբ մեղադրական դատավճիռն ուժի մեջ է մտնում և օրենքով սահմանված այլ հիմքերով:

Ուկրաինայի «Դատական իշխանության և դատավորների կարգավիճակի մասին» օրենքի[3] 142-րդ 2-րդ մասի համաձայն՝ այն դատավորը, որը կենսաթոշակի է անցել մինչև նույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ կենսաթոշակի անցնելու տարիքը լրանալը, պետք է ստանա մշտական ամսական դրամական ապահովում (նպաստ): Դատավորի՝ օրենքով նախատեսված կենսաթոշակային տարիքի հասնելու պահից վերջինս իրավունք ունի ընտրել՝ ամենամսյա մշտական դրամական ապահովման կամ «Պարտադիր պետական կենսաթոշակի մասին» Ուկրաինայի օրենքով նախատեսված կենսաթոշակի միջև: Միևնույն հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ ամսական մշտական նպաստը պետք է կազմի համանման պաշտոն զբաղեցնող դատավորի աշխատավարձի 50 տոկոսը: Դատական ծառայության՝ քսան տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա դիմաց նպաստը պետք է ավելանա 2 տոկոսով: Ավելին, համաձայն վկայակոչված օրենքի եզրափակիչ և անցումային դրույթների 25-րդ կետի՝ դատավորը, ով որակավորման գնահատման արդյունքում հաստատել է իր համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին կամ դատավոր է նշանակվել օրենքի ուժի մեջ մտնելուց հետո անցկացված քննության արդյունքում և որպես դատավոր աշխատել է երեք տարի, ցմահ դրամական ապահովման իրավունք է ձեռքբերում օրենքով սահմանված չափով: Իսկ մյուս դեպքերում օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կենսաթոշակի անցած դատավորն իրավունք է ձեռքբերում ստանալու դատավորի վարձատրության 80%-ի չափով ցմահ դրամական ապահովում: Դատական ծառայության՝ քսան տարին

[3] Օրենքը հասանելի է հետևյալ հղումով՝
https://vkksu.gov.ua/userfiles/doc/Law_on_Judiciary_and_Status_of_Judges_16%2007%202016_ENG.pdf

գերազանցող յուրաքանչյուր տարվա դիմաց նպաստը պետք է ավելանա 2 տոկոսով, սակայն այն չպետք է գերազանցի դատավորի վարձատրության 90 %-ը: Այս կարգավորումն ընդունվելուց հետո հրաժարականի դիմում է ներկայացրել 3000 դատավոր (որոնք կազմում էին Ուկրաինայի դատավորների 30%-ը)՝ առանց սպասելու որակավորման գնահատմանը: Հարկ է նկատել, որ Վենետիկի հանձնաժողովը նշված օրենքի վերաբերյալ իր կարծիքում ներկայացված կառուցակարգը չի քննադատել:[4]

Դանիայում դատավորների պաշտոնավարման տարիքը լրանում է 70 տարեկանում, սակայն Դանիայի սահմանադրական ակտի համաձայն նրանք կենսաթոշակի իրավունք են ձեռքբերում սկսած 65 տարեկանից և ստանում են իրենց հրաժարականի պահին ստանալիք աշխատավարձի չափով դրամական ապահովում մինչև 70 տարեկանը, որից հետո ստանում են կենսաթոշակ:[5]

Ավստրալիայում դատավորների պաշտոնավարման տարիքը լրանում է 70 տարեկանում, սակայն «Դատավորների կենսաթոշակի մասին» օրենքի համաձայն դատավորը կարող է կենսաթոշակի գնալ 60 տարեկանում՝ 10 տարի որպես դատավոր աշխատելուց հետո, իսկ առանձին տարածաշրջանի դատավորներ՝ նույն պայմանով 55 տարեկանում՝ ստանալով օրենքով սահմանված կենսաթոշակ:[6]

Դատավորի վաղ կենսաթոշակի անցնելու հարկադրական կառուցակարգեր

Վերջին տարիներին ամենաշատը քննարկված այդպիսի նախաձեռնություններից են Հունգարիայի 2012 թվականների և Լեհաստանի 2018

---

[4] https://www.osce.org/odihr/335406?download=true

5 Տե՛ս The Constitutional Act of Denmark, § 64, օրենքը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.thedanishparliament.dk/~/media/pdf/publikationer/english/my_constitutional_act_with_explanations.ashx:

[6] Օրենքը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www7.austlii.edu.au/cgi-bin/viewdb/au/legis/cth/consol_act/jpa1968184/

թվականների համապատասխան օրենսդրական գործընթացները: Մասնավորապես, Հունգարիայում 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած Հունգարիայի հիմնարար օրենքի համաձայն դատավորների և դատախազների կենսաթոշակի անցնելու տարիքը 70-ից փոխվեց 62-ի (աստիճանաբար բարձրանալով մինչև 65)՝ պարտադրելով նրանց 70-ի փոխարեն կենսաթոշակի անցնել 62 (65)-ում: Փոփոխությունը հանգեցրեց 274 դատավորների և դատախազների հարկադրական կենսաթոշակի անցնելուն, սակայն երկիրը հետո փոխեց կարգավորումը՝ առաջարկելով նշված անձանց վերականգնել իրենց պաշտոններում կամ փոխհատուցում տրամադրել նրանց: Լեհաստանում 2018 թվականի ապրիլի 3-ին ուժի մեջ մտած՝ Գերագույն դատարանի մասին օրենքում կատարված փոփոխությունները նախատեսում էին երկրի գերագույն դատարանի դատավորների 40%-ի հարկադրական վաղ կենսաթոշակի անցնելը: Դատավորների վաղ կենսաթոշակի անցնելու՝ վերը ներկայացված մոդելները ԵՄ և ԵԽ կառույցների, այդ թվում՝ ՄԻԵԴ կողմից խնդրահարույց են որակվել դատարանների անկախության, դատավորների անփոփոխելիության սկզբունքի խախտման և տարիքի հիմքով խտրականության (Եվրոպական հանձնաժողով) տեսանկյունից: Հատկանշական է, սակայն, որ բոլոր քննադատությունները վերաբերում են դատավորների **հարկադրական** վաղ կենսաթոշակի անցնելու պայմանին: **ՄԻԵԴ**-ը թեև քննադատել է Հունգարիայի մոդելը, սակայն Ջ.Բ.-ն և այլոք ընդդեմ Հունգարիայի գործով արտահայտած իրավական դիրորոշման մեջ, ի թիվս այլ հարցերի, անդրադառնալով այն դատավորների դիմումին, որոնք վաղ կենսաթոշակի էին անցել սեփական դիմումի հիման վրա, նկատել է. «*Վերը նշված լրացուցիչ փաստական հանգամանքը՝ դիմումատուների պաշտոնից ազատումը կենսաթոշակի անցնելու իրենց սեփական դիմումի հիման վրա, հարց է առաջացնում, թե արդյոք դրա հետևանքի համար պատասխանատու է պատասխանող պետությունը, այլ խոսքերով, թե արդյոք պետությունը կարող է*

պատասխանատվություն կրել Կոնվենցիայի հիման վրա դիմումատուի սեփական որոշման հետևանքով»[7] *«(……) դիմումատուները չեն հակադարձել, որ իրենց պաշտոնից ազատումը համապատասխանել է, գոնե իրենց դիմումի քննարկման ժամանակ, իրենց ազատ կամքին, որը նրանք ձևավորել են՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները և տարբեր հնարավոր սցենարները: Ոչ էլ պետությունը խաղացել է ակտիվ կամ ապօրինի դեր դիմումատուներին իրենց կամքին հակառակ կենսաթոշակի ուղարկելու հարցում*:»[8]

Նույն տրամաբանությամբ է առաջնորդվել Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն՝ անփոփոխելիությունը որպես դատարանների անկախության երաշխիքների վերաբերյալ իր վերլուծության մեջ ընդգծելով, որ. «Դատավորի պաշտոնավարման ժամկետը պետք է սահմանված լինի օրենքով: Մշտական նշանակումը պետք է դադարեցվի միայն կարգապահական կամ քրեական՝ օրենքով սահմանված նորմերի լուրջ խախտումների դեպքում կամ, երբ դատավորն այլևս չի կարող կատարել դատական գործառույթներ: *Վաղ կենսաթոշակի անցնելը պետք է հնարավոր լինի միայն դատավորի դիմումի հիման վրա կամ բժշկական պատճառներով*:»: [9] Այսինքն, միջազգային կառույցների կողմից քննադատվել է միայն վաղ կենսաթոշակի անցնելու հարկադրական մոդելը:

Դատավորի վաղ կենսաթոշակի անցնելու կառուցակարգ գործում է Ավստրիայում, որի հիմքերից մեկը կարող է լինել երկու տարի անընդմեջ դատավորի գործունեության գնահատականի՝ սահմանված պահանջներին անհամապատասխանությունը կամ այլ հանգամանքները, որոնք հաստատում են, որ դատավորն այլևս չի համապատասխանում դատավորի ընդունելության պահանջներին: Այս դեպքում նրան տրվում է գրավոր ծանուցում առ այն, որ նա

[7] Տե՛ս J.B. and others v. Hungary, Application no. 45434/12, 45438/12, 375/13, 27.11/2018, կետ 75:
[8] Տե՛ս նույն տեղում, կետեր 77-78:
[9] https://rm.coe.int/16807096c1, կետ 50:

պետք է դիմի վաղ կենսաթոշակի անցնելու համար ծանուցումը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում:[10]

Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով առաջարկվող մոդելին, ընդգծել է, որ. «(...) քննադատությունը չի կարող տարածվել այն դեպքերի վրա, երբ պաշտոնից հրաժարումը հիմնված է ՍԴ դատավորների կամավոր որոշման վրա: Որպես սկզբունք, եթե վաղ կենսաթոշակի անցնելը մնում է որպես բացառապես կամավոր, այսինքն՝ բացառում է անհարկի (քաղաքական և անձնական) ճնշումը դատավորների նկատմամբ, կամ երբ այն նախատեսված չէ քննության փուլում գտնվող գործերի ելքի վրա ազդեցություն ունենալու համար, ապա չկա որևէ չափանիշ, որի հիման վրա Վենետիկի հանձնաժողովը դեմ կլինի նման սխեմային:»:[11]

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Հաշվի առնելով վերը շարադրված փաստարկները՝ Նախագծով առաջարկվում է Սահմանադրական դատարանի դատավորների բացառապես կամավոր սկզբունքով վաղ կենսաթոշակի անցնելու կառուցակարգ՝ բոլոր սոցիալական երաշխիքների պահպանմամբ: Մասնավորապես առաջարկվում է մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը Սահմանադրական դատարանի անդամ նշանակված և «Սահմանադրական դատարանի մասին» 2017 թվականի հունվարի 17-ի ՀՕ-42-Ն սահմանադրական օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակում իր պաշտոնավարումը շարունակած Սահմանադրական դատարանի դատավորի կողմից մինչև 2020 թվականի հունվարի 31-ը հրաժարական

[10] UNIFIED PATENT COURT, Recruitment of judges, Qualifications required1 for and age limit of appointment to judicial offices in the Contracting Member States, էջ 10:
[11] http://moj.am/storage/uploads/CDL2019030_ARM.pdf, կետ 60:

ներկայացնելու դեպքում նրա լիազորությունները դադարելուց հետո մինչև իր համար Սահմանադրությամբ սահմանված պաշտոնավարման տարիքը լրանալը նրան հատկացնել կենսաթոշակ՝ հրաժարականի պահին ստացած պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի չափով: Այդ իրավունքից չեն կարող օգտվել «Սահմանադրական դատարանի մասին» 2017 թվականի հունվարի 17-ի ՀՕ-42-Ն սահմանադրական օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընտրված Սահմանադրական դատարանի դատավորները: Այս կարգավորումից բխող համապատասխան լրացում է նախատեսվում նաև «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում:

Միևնույն ժամանակ, մեծ թվով դատավորների կողմից հրաժարական ներկայացվելու դեպքում հնարավոր ճգնաժամը կանխելու նպատակով[12] Նախագծով առաջարկվում է կարգավորում, համաձայն որի, եթե վաղ կենսաթոշակի անցնելու նպատակով հրաժարական է ներկայացրել Սահմանադրական դատարանի ավելի, քան երեք դատավոր, ապա Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար ընտրությունն անցկացվում է սահմանված Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար թեկնածուների առաջադրումներ կատարելու համար Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո 15 օրյա ժամկետում:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է իրավական նախադրյալներ ստեղծել Սահմանադրական դատարանի կազմավորման վերաբերյալ 2015

[12] Նման իրավիճակի մեղմման կոչ է արել Վենետիկի հանձնաժողովը իր կարծիքում, տե՛ս նախորդ կետը:

թվականի սահմանադրական փոփոխություններով ամրագրված մոդելի կենսագործումն է:

4. ***Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները***

Նախագծերի փաթեթը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի և «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի

նախագծերի ընդունման դեպքում պետական բյուջեում հնարավոր է ծախսի ավելացում, որի կոնկրետ չափը կախված է հրաժարական ներկայացնող դատավորների թվից և տարիքից: Սահմանադրական դատարանի նախագահի և վեց դատավորի հրաժարականի դեպքում նրանց՝ մինչև Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման տարիքը լրանալը վճարվելիք կենսաթոշակի չափը կկազմի տարեկան շուրջ 90.796.992 դրամ:

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Սահմանադրական դատարանի մասին» 2018 թվականի հունվարի 17-ի ՀՕ-42-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 88-րդ հոդվածում լրացնել նոր՝ 4.1-ին, 4.2-րդ և 4.3-րդ մասեր.

«4.1. Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամները, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են պաշտոնավարել, ~~անդամ նշանակված և սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակում իր պաշտոնավարումը շարունակած Սահմանադրական դատարանի դատավորի կողմից՝~~ սույն մասի ուժի մեջ մտնելու պահից սկսած՝ երկամսյա ժամկետում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական ներկայացնելու դեպքում, հրաժարականի ընդունված համարվելու արդյունքում ~~նրա~~ լիազորությունները դադարելուց հետո մինչև ~~իր համար~~ Սահմանադրությամբ սահմանված պաշտոնավարման տարիքը լրանալը ~~նա~~ ստանում ~~է~~ են կենսաթոշակ՝ հրաժարական ներկայացնելու օրվա դրությամբ հաշվարկված

աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով, եթե պահպանվել է սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությամբ նախատեսված պահանջը:

4.2. Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամները, որոնք սույն ~~նշանակված և սույն~~ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են պաշտոնավարել,~~Սահմանադրական դատարանի միաժամանակ սույն հոդվածի դատավորի կարգավիճակում իր պաշտոնավարումը շարունակած Սահմանադրական դատարանի դատավորը միաժամանակ սույն հոդվածի~~ 4-րդ և 4.1-ին մասերով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու դեպքում հրաժարական ներկայացնելու դիմումում նշում ~~է~~են, թե որ մասով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունքից ~~է~~ են օգտվում: Այդ նշումը չկատարվելու դեպքում՝ ~~նա~~ օգտվում ~~է~~ են սույն հոդվածի 4.1-ին մասով նախատեսված իրավունքից:

4.3. Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամները, որոնք ~~նշանակված և~~ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են պաշտոնավարել.~~Սահմանադրական դատարան, ի դատավորի կարգավիճակում իր պաշտոնավարումը շարունակած Սահմանադրական դատարանի դատավորին~~ սույն հոդվածի 4.1.-ին մասով սահմանված հիմքով նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում (հաշվարկվում) է ~~իր~~՝ Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման տարիքը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից՝ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով սահմանված չափով՝

առանց կենսաթոշակի իրավունքը վերանայելու, եթե պահպանվել է սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությամբ նախատեսված պահանջը:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

5. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված՝ Օրենքի 88-րդ հոդվածում լրացվող 4.1-րդ մասի իրավակարգավորումը Սահմանադրական դատարանի դատավորի կողմից սահմանված ժամկետում հրաժարական ներկայացնելու մասով գործում է սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6. Եթե Օրենքի 88-րդ հոդվածի 4.1.-ին մասով նախատեսված ժամկետում վաղ կենսաթոշակի անցնելու նպատակով հրաժարական է ներկայացրել Սահմանադրական դատարանի ավելի, քան երեք դատավոր, ապա Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար ընտրությունն անցկացվում է ~~սահմանված~~ Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար թեկնածուների առաջադրումներ կատարելու՝ ~~համար~~ Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» և «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Կ-378-15.11.2019,03.12.2019-ՊԻ-011/1) վերաբերյալ ստացված առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Պատգամավոր Վահագն Հովակիմյան	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4.1. Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամները,	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են պաշտոնավարել, սույն մասի ուժի մեջ մտնելու պահից սկսած՝ երկամսյա ժամկետում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական ներկայացնելու դեպքում, հրաժարականի ընդունված համարվելու արդյունքում լիազորությունները դադարելուց հետո մինչև Սահմանադրությամբ սահմանված պաշտոնավարման տարիքը լրանալը ստանում են կենսաթոշակ՝ հրաժարական ներկայացնելու օրվա դրությամբ հաշվարկված աշխատավարձի			

		(պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով, եթե պահպանվել է սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությամբ նախատեսված պահանջը: 4.2. Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամները, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են պաշտոնավարել, միաժամանակ սույն հոդվածի 4-րդ և 4.1-ին մասերով սահմանված			

		կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու դեպքում հրաժարական ներկայացնելու դիմումում նշում են, թե որ մասով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունքից են օգտվում: Այդ նշումը չկատարվելու դեպքում՝ օգտվում են սույն հոդվածի 4.1-ին մասով նախատեսված իրավունքից: 4.3. Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամները, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են պաշտոնավարել, սույն հոդվածի 4.1.-ին մասով սահմանված հիմքով նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում			

		(հաշվարկվում) է՝ Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման տարիքը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից՝ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով սահմանված չափով՝ առանց կենսաթոշակի իրավունքը վերանայելու, եթե պահպանվել է սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությամբ նախատեսված պահանջը:»:			